Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ, Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917 թթ.), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975, 354 էջ։

Գրախոսվող աշխատությունը Հ. Մելիքյանի «Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում 1914—1918 թթ.» ուսումնասիրության առաջին մասն է։ Նրա վերջին մասը՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը», լույս է տեսել 1970 թ. և լավ ընդունելություն գտել ընթերցող հասարակայնության շրջանում։ Հ. Մելիքյանն առաջինն է, որ մեր պատմագրության մեջ նշված պրոբլեմը դարձրել է առանձին ուսումնասիրության խնդիր։

Հ. Մելիքյանի աշխատությունը գրված է հիմնականում նորահայտ արխիվային նյութերի, ժամանակի մամուլի և հրապարակում եղած գրականության հետազոտման ու քննական վերլուծման հիման վրա։ Այն հեղինակի երկարատև ու քրտնաջան աշխատանքի հանրագումարն է՝ շարադրված մարքս-լենինյան մեթոդոլոգիայով։

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, վեց գլուխներից և եզրափակումից։ I և II գլուխներում լուսաբանվում են հեղափոխական-դեմոկրատական շարժումները Կովկասյան բանակում 1914—1915 թթ. և 1915 թ. Բաքվի բոլշևիկների խորհրդակցությունը։ Բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տրված, որ թեև Կովկասյան բանակում պատերազմի սկզբում բոլշևիկները դեռևս փոքր թիվ էին կազմում, սակայն դա զգալիորեն հատուցվում էր այն բանով, որ բանակը շարունակ համալրվում էր հեղափոխական պրոլետարիատի հաշվին։ «Որքան էլ դա հաճելի չէր ցարիզմին,— գրում է հեղինակը,— բայց և այնպես նա դրանից խուսափել չկարողացավ։ 1915-ի կեսերից արդեն ցարիզմը պատերազմի մոլուցքի մսաղացի անհագուրդ ախորժակը բավարարելու համար ստիպված բանակ էր ուղարկում անգամ ռազմական արդյունաբերության ձեռնարկություններում զբաղված բանվորներին։ Մինչ այդ էլ մոբիլիզացվում և բանակ էին ուղարկվում շատ բանվորներ, որոնք իրենց հետ ռազմաճակատ էին տեղափոխում դասակարգային մարտերում կուտված փորձն ու գիտելիքները, պայքարի պրոլետարական, բոլշևիկյան մեթոդները» (էջ 36)։ Հեղինակը զարգացնում է այն միտքը, որ բոլշևիկները հաշվի առնելով 1905—1907 թթ. հեղափոխության դասերը, հետագայում ուժեղացրին աշխատանքը բանակում, որովհետև, ինչպես փորձը ցույց տվեց, առանց ջլատելու, թուլացնելու ցարիզմի հենարանը՝ բանակը, անհնարին էր բուրժուա-դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը։ Այս առնչությամբ էլ հեղինակը բացահայտել է բանակում բոլշևիկների տարած աշխատանքի ձևերն ու մեթոդները։ Գրքում լայն տեղ է տրված այն իրողության լուսաբանմանը, որ երկրամասի դեմոկրատական խավերի ու Կովկասյան բանակի զինվորների մեջ կուսակցական-քաղաքական աշխատանքներն ուժեղացնելու գործում կարևոր դեր կատարեց 1915 թ. հոկտեմբերին Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Բաքվում հրավիրված բոլշևիկների խորհրդակցությունը։ Խորհրդակցությունում ընտրված ՌՍԴԲԿ Կովկասյան բյուրոն հրատարակեց հակապատերազմական բազմաթիվ կոչեր և թռուցիկներ, որոնց շնորհիվ լայն թափ ստացավ բոլշևիզմի գաղափարների պրոպագանդան բանակում։

Ուշագրավ են աշխատության այն բաժինները, որոնցում կոնկրետ լուսաբանվել է բանակում աշխատանք տանող բոլշևիկների գործունեությունը։ Ընթերցողը ծանոթանում է շատ բոլշևիկ գործիչների անունների հետ, որոնք լայն աշխատանք էին ծավալել Կովկասյան ռազմաճակատում և թիկունքային զորամասերում։

Ուսումնասիրության III և IV գլուխներում հեղինակը քննել է այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ իրադրությունը թիկունքում, Կովկասյան բանակի հեղափոխականացման պրոցեսի խորացումը, բանակի վերաբերմունքը դեպի արևմտահայության ողբերգությունը։ Նշված հարցերը Հ. Մելիքյանը շարադրել է հիմնականում արխիվային նյութերի հիման վրա, որոնց նշանակալից մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։

Մենագրության մեջ օգտագործված են ռազմաճակատից ստացված հետաքրքիր նամակներ, որոնցում զինվորները և հրամանատարները նկարագրում են բանակի ծանր վիճակը՝ կապված պարենավորման, հանդերձանքի, սանիտարական անմխիթար դրության հետ։ Բերված են նաև թիկունքից ստացված նամակներ։ Խորը վերլուծության ենթարկելով նամակներում տեղ գտած փաստերը և արտահայտված տրամադրությունները, հեղինակը ճիշտ հետևություն է անում 1916 թ. վերջերին ստեղծված հեղափոխական իրադրության վերաբերյալ։

Հ. Մելիքյանի գրքում բերված բազմաթիվ արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, թե ինչպիսի զարհուրելի տեսարանների հանդիպեց Կովկասյան բանակը Արևմտյան Հայաստանում։ Արխիվային փաստաթղթերը միաժամանակ վկայում են այն հոգատարության մասին, որ ցույց են տվել ռուսական զորքերը պատահարար կենդանի մնացած հայ կանանց, երեխաներին ու ծերերին։ «Նահանջելով Մուշի դաշտից,— հաղորդում է փաստաթուղթը,— գնդերը, դիվիզիաները իրենց հետ վերցրեցին գյուղերում մնացած երեխաներին։ Սրտաշարժ էր տեսնել, թե ինչպես ոչ միայն անհատ մարդիկ, այլև ամբողջ վաշտեր հայրաբար էին վարվում այդ երեխաների հետ։ Ստորին աստիճաններից (զինվորներից—Հ. Մ.) շատերը իրենց գրկում էին սնփական խղճուկ միջոցներից, միայն թե հագցնեին նրանց... և լավ կերակրեին» (էջ 114)։ Բերված փաստերից Հ. Մելիքյանը եզրակացրել է, որ հաղորդակից դառնալով հայ ժողովրդի տառապանքներին ու զրկանքներին, տեսնելով նրա կուլտուրական արժեքների ոչնչացումը, կռահելով հզոր տերությունների բուռ անտարբերությունը դեպի գենոցիդի այդ անօրինակ երևույթը, Կովկասյան բանակի զինվորները լցվում էին ատելությամբ դեպի շահագործողները, ամրապնդվում էր նրանց հեղափոխական, դեմոկրատական, ինտերնացիոնալիստական ոգին (էջ 115—116)։

Աշխատության V գլուխը նվիրված է «Հեղափոխական իրադրության հասունացումը երկրում և Կովկասյան բանակը Փետրվարյան հեղափոխության նախօրյակին» հարցի լուսաբանմանը։ Հեղինակը ցույց է տալիս Ռուսաստանում հասունացող ճգնաժամը, որն իր մեջ էր առնում կյանքի բոլոր հիմնական բնագավառները՝ տնտեսականը, քաղաքականը և ռազմականը։ Նամակներից բերված մեջբերումները ցույց են տալիս, որ զինվորները վճռականորեն դատապարտում էին ցարիզմը, համախմբման կոչ անում, դնում միատնաբար հանդես գալու պահանջ։ Ինչպես ցույց է տվել հեղինակը, այս գործում խոշոր էր բոլշևիկների դերը, որոնք, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, մեծ աշխատանք ծավալեցին Կովկասյան բանակի զորամասերում, բացահայտելով պատերազմի իմպերիալիստական բնույթը, զինվորական մասսաներին գաղափարապես ու կազմակերպչորեն նախապատրաստելով ցարիզմի և ապա բուրժուազիայի տապալմանը։

Մենագրության արժանիքներից է նաև այն, որ հեղինակը ցույց է տալիս 1915—1916 թթ. հայկական կամավորական չոկատներում ծավալված հեղափոխական-դեմոկրատական շարժումը։

Աշխատության վերջին՝ VII գլխում, լուսաբանված են հետևյալ հարցերը. Կովկասում և բանակում ստեղծված քաղաքական իրադրությունը, հեղափոխական շարժումները Թիֆլիսի և Բաքվի կայազորներում, զինվորական հեղափոխական շարժումները Կարս-Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ շրջանում, Սարիղամիշը հեղափոխության առաջին օրերին, ինքնակալության անկման արձագանքները Ալեքսանդրապոլում, հեղափոխական շարժման վերելքը թիկունքային զորամասերում, Փետրվարյան հեղափոխությունը և Կովկասյան ռազմաճակատը և այլն։

Շարադրելով Փետրվարյան հեղափոխությունից հետո Կովկասում և Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած դեպքերը, հեղինակը նշում է, որ, ինչպես բանակային կոմիտեներում, այնպես էլ Թիֆլիսի բանվորական և զինվորական սովետներում դեռես ճնշող մեծամասնություն էին կազմում մենշևիկներն ու էսէռները։ Դա հեղինակը բացատրում է մի շարք պատճառներով։ Նախ՝ ռազմաճակատում գտնվող զորամիավորումները և զորամասերը գտնվում էին բուն երկրից հեռու։ Երկրորդ, Կովկասյան բանակի հրամանատարությունը ձեռք-ձեռքի տված էսէռների ու մենշևիկների հետ, ամեն կերպ աշխատում էր արգելել բոլշևիկյան թերթերի ու դրականության մուտքը ռազմաճակատ։

Քննության առնելով Անդրկովկասում հեղափոխական շարժման առանձնահատկությունները, Հ. Մելիքյանը նշում է, որ, ի տարբերություն Պետրոգրադի բանվորների դեպուտատների սովետի, Թիֆլիսի սովետը չդարձավ հեղափոխական իշխանության օրգան, այլ նպաստեց ժամանակավոր կառավարության տեղական օրգանների ստեղծմանն ու ամրապնդմանը (էջ 188)։

Փաստերի խորը ուսումնասիրությամբ հեղինակը եզրակացրել է, որ ընդհանուր առմամբ բոլշևիկները Անդրկովկասում գործում էին ոչ պատշաճ վճռականությամբ. նրանք խուսափեցին

նախաձեռնությունը իրենց ձեռքը վերցնելու տակտիկայից։ Դրա հետևանքով էր, որ Կարսի 40 հազարանոց կայազորի 1917 թ. մարտի ելույթից հետո, որը հեղափոխականացնող մեծ դեր խաղաց թիկունքում ու ռազմաճակատում, էսէռները, դաշնակցականները և մենշևիկները Կարսում դարձան դրության տերը։ Կարսի իրադարձությունները բավականին հանգամանորեն են լուսաբանված, քանի որ դրանք առավել նշանակալից էին ամբողջ Կովկասում և նրանցում լավ արտացոլված էին ժամանակի քաղաքական կյանքը, կուսակցությունների վարքագիծը։

Գրախոսվող աշխատությունը զերծ չէ նաև թերություններից։

Գրքում ավելի շատ խոսվում է հեղափոխական շարժումների և բոլշևիկների գործունեության մասին թիկունքային զորամասերում, քան ռազմաճակատում։ Մինչդեռ պետք է լիներ հակառակը, քանի որ Կովկասյան բանակի զորքի բացարձակ մեծամասնությունը գտնվում էր ռազմաճակատում, որի զորամասերը երկրից կտրված, նրա ներքին քաղաքական կյանքին հաճախ անտեղյակ լինելու և այլ պատճառներով գտնվում էին աջ էսէռների ազդեցության տակ։ Բնական է, որ ռազմաճակատում բոլշևիկները պետք է գործադրեին ավելի մեծ ջանքեր՝ իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար։

Առաջին գլխում հեղինակը բերում է մի շարք փաստարկումներ, թե ինչպես Կովկասյան բանակում առանձին զինվորներ հրաժարվում էին ռազմադաշտ մեկնելուց։ Այդ փաստարկումների մի մասը սակավ համոզիչ է, որովհետև առանձին զինվորների՝ պատերազմին մասնակցելուց հրաժարվելը կապված է եղել նրանց կրոնական համոզմունքների հետ։

Նշված դիտողությունները, ընդհանրապես վերցրած, չեն նսեմացնում Հ. Մելիքյանի մենագրության գիտական արժեքը։ Գրախոսվող աշխատությունը գիտական լուրջ ուսումնասիրություն է՝ հագեցված արխիվային հարուստ նյութով և խոր վերլուծություններով։

Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր